ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1

ք. Երևան « 27 » « հոկտեմբերի » 2020 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 01273917
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011033793	Հ/Հ՝ 220573330143000
գլխավոր քարտուղար՝ Ա.Մուրադյան	Տնօրեն՝ Հ.Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 27 » « հոկտեմբերի » 2020 թ. *կնքված*
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/2	Տես Հավելված 1.1	Դրամ	*2 363 000*	*2 363 000*	*1*	Տես Հավելված 1.1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում

*** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011033793
գլխավոր քարտուղար՝
Ա. Լուսադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ճարտարին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ՝ 01273917
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220573330143000
Տնօրեն՝
Հ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 27 » « հոկտեմբերի » 2020 թ. *կնքված*
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Շենքի, շինության անվանումը, հասցեն, աշխատանքները
1	Արմավիրի մարզ գ. Գեղակերտ (Սամաղար) Մ. Խորենացու փող. տուն 25, 386,4 քմ, հողատարածք՝ 1608 քմ մակերեսով հիմնանորոգման աշխատանքների իրականացում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

N	Կատարման ենթակա աշխատանքների Համառոտ բնութագիրը	Առկա շենքերի կապիտալ վերանորոգում:
1	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	*Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր» - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» - ՀՕ-110-Ն 21.06.2014թ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք - ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» և այլն:
2	Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 1. Էսքիզային առաջարկ՝ Էսքիզային նախագծի պատրաստում և համաձայնեցում: 2. Աշխատանքային նախագիծ՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր»
3	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում. ա) ելակետային տվյալներ -- ճարտարապետահատակագծային առաջադրանք, բ) չափագրություններ, գ) ընդհանուր բացատրագիր, դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով, ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, զ) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, է) ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, ը) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:
4	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի և պատվիրատուի հետ: Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 5 օրինակ, էլեկտրոնային և

		փաստաթղթային տարբերակներով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության ձեռքբերում և պետական համալիր փորձաքննության ապահովում՝ համաձայն ներկայացվող պահանջների՝
Ամփոփիչ ձևակերպում. 1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին», կամ 2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», կամ 3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին»:		
Վերը նշված պահանջների չկատարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատժամիջոցների կիրառում (<Վարչական իրավախախտումների մասին > ՀՀ օրենք, ՀՀ կառ.04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> N 526-Ն որ.,)		

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

Տարեցների փոքր խմբային տան ստեղծման

Շինարարության, կահավորման և տեխնիկական զինման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման

1. **<u>Նախաբան</u>**

ՀՀ ձեռնարկում է արդյունավետ միջոցներ տարեց անձանց անկախ և ինքնուրույն ապրելու, համայնքում ներառվելու իրավունքն իրացնելու համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ինքնուրույն ընտրելու իրենց բնակության վայրը, ստանան համայնքում ապրելու և ներառվելու, այդ թվում՝ համայնքից չմեկուսացվելու համար անհրաժեշտ անհատական ծառայություններ:

Յուրաքանչյուր փոքր խմբային տանը կարող են բնակվել 8-12 շահառու: Փոքր խմբային տանը շահառուների բնակության համար նախատեսված սենյակների բնակելի մակերեսը՝ մեկ շահառուի հաշվարկով, չի կարող պակաս լինել 5 քառակուսի մետր մակերեսից:

Փոքր խմբային տունը պետք է ունենա նաև

- հարակից տարածք շուրջ 500 մ2, որը պետք է ունենա զբոսուղի, կանաչապատ գոտի, ջերմոցային տնտեսություն (սեփական սպառման մթերքների համար), տաղավարներ բացօթյա հանգստի համար, խաղահրապարակ, նստարաններ, ճոճաթոռներ, ցանկապատ: Ցանկապատը պետք է ապահովի շահառուների անվտանգությունը՝ զերծ պահելով կողմնակի անձանց մուտքը, սակայն չպետք է հիշեցնի փակ տարածություն:

- Շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր, ապահովված լինի պիտանելիության ժամկետում գտնվող կրակմարիչներով՝ ըստ փոքր խմբային տան տարածքի մակերեսի: Շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «911» ծառայությանը, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգի աշխատանքը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության միջոցով՝ համապատասխան պայմանագրի հիման վրա:

- Ջեռուցման համակարգ, որը ջեռուցման ամբողջ ժամանակահատվածում պետք է ապահովի հավասարաչափ տաքացում: Ջեռուցման համակարգը պետք է գործարկվի նաև արևային մարտկոցների միջոցով:

- Պետք է ապահովված լինի շուրջօրյա տաք և սառը ջրով, կենտրոնացված ջրամատակարարմամբ և ջրահեռացման համակարգով: Ժամային գրաֆիկով ջրամատակարարման դեպքում, փոքր խմբային տունը պետք է ունենա ջրակուտակիչ տարողություններ՝ մշտական հոսող ջրի ապահովման համար: Փոքր խմբային տան խմելու-տնտեսական ջրի (այդ թվում՝ պահուստային տարողությունների) որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի N 876 հրամանով հաստատված՝ «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջների

➢ տան մուտքի դռները պետք է լինեն կողպվող՝ անհրաժեշտության դեպքում բացառելով կողմնակի անձանց մուտքի հնարավորությունը:

➢ տեղակայման տարածքը պետք է լինի բարեկարգ՝ ապահովված ավտոմեքենաների և հետիոտնի համար կոշտ ծածկույթով պատված ճանապարհներով, մակերևութային հոսքերի հեռացումով, արհեստական լուսավորմամբ:

2. Նպատակ

Փոքր խմբային տան ստեղծման նպատակն է ապահովել կացարանի կարիք ունեցող տարեց անձանց կացարանով ապահովելու, ինչպես նաև անկախ և ինքնուրույն կյանքի իրավունքը, իսկ խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններում ապրող անձանց՝ իրենց ցանկության դեպքում, տրամադրել համայնքահենք ծառայություններ, ինչպես նաև կանխարգելել տարեցների մուտքը խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններ:

Հետևաբար սույն տեխնիկական հանձնարարականով (ՏՀ) նախատեսված խորհրդատվական ծառայությունների նպատակն է համապատասխան մասնագիտական կազմակերպության ընտրության (այսուհետ՝ խորհրդատու) միջոցով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղում (այսուհետ՝ սահմանված տարածք) շինարարության, կահավորման և տեխնիկական զինման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացումը

3. Աշխատանքների շրջանակը

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար խորհրդատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու է հետևյալ աշխատանքները՝

1) Սահմանված տարածքներում հանձնարարվող օբյեկտների շինարարության, կահավորման և տեխնիկական զինման նախագծանախահաշվային փաստաթղթերի շին-վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի (այսուհետ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ) պատրաստումը, որը ներառում է հետևյալ գործողությունների կատարումը՝

1.1. Հանձնարարվող օբյեկտների շին-վերանորոգման համար հատկացված հողատարածքների և *շենք-շինությունների սեյսմիկ, գեոդեզիական պայմանների ու առանձնահատկությունների ուսումնասիրությունը* և վերջիններիս վիճակի վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը,

1.2. Հանրային ծառայություններ տրամադրող համապատասխան կառույցներից հանձնարարված օբյեկտների գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, աղբահանության ծառայությունների տրամադրման և հակահրդեհային անվտանգության համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների ստացումը և դրանց ստացման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումների կատարումը,

1.3. Հանձնարարված օբյեկտներում նախագծանախահաշվային աշխատանքներ սկսելու նպատակով, տեղական ինքնակառավարման մարմիններից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինթույլտվության ստացումը,

1.4. Պատվիրատուի կողմից տրամադրված նախագծային առաջադրանքի հիման վրա հանձնարարված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ապահովումը,

1.5. Պատվիրատուի հետ նախագծանախահաշվային փաստաթղթերի նախնական համաձայնեցումից հետո դրանց՝ անկախ կազմակերպության կողմից փորձաքննության անցկացման ու համապատասխան եզրակացության ստացման ապահովումը,

1.6. Անկախ փորձաքննություն անցած և պատվիրատուի հետ վերջնական համաձայնեցված նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցումը նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների հետ, շին-վերանորոգման աշխատանքների, այդ թվում շինարարական աղբահանության թույլտվությունների ստացումը:

2) Աշխատանքային նախագծերում առանձին բաժնով պետք է ներկայացվի նաև ինտերիեր-դիզայներական նախագծերի, կահավորման միջոցների մասնագրերի և նախահաշիվների պատրաստումն ու ապրանքների մատակարարումների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացումը:

2.1 ուսումնասիրել սույն տեխնիկական հանձնարարականով նախատեսված օբյեկտների շինարարական նախագծերն ու օբյեկտների փաստացի պայմաններն ու մշակել այդ օբյեկտների ներքին ինտերիեր-դիզայներական նախագծերը, կահավորման համար անհրաժեշտ ապրանքների և կենցաղային տեխնիկայի ցանկը, մասնագրերն ու նախահաշիվները՝ ներկայացնելով հաշվարկների բացվածքներն ու ապրանքների արժեքները հավաստող շուկայական գների հիմնավորումները,

2.2 ապահովել նախագծերի, նախահաշիվների և մասնագրերի մշակումը՝ Պատվիրատուի ներկայացրած պահանջներին համապատասխան,

2.3 մատակարարող կազմակերպությունների կողմից՝ ապրանքների մատակարարումների ընթացքում, իրականացնել հսկողություն՝ ապահովելով ընդունվող ապրանքների համապատասխանությունը ապրանքների

մասնագրերին, նախագծերին ու մատակարարման պայմանագրով նախատեսված այլ պահանջներին՝ տալով մասնագիտակա նեզրակացություն:

3) *Հանձնարարվող օբյեկտների շին-վերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացումը, որը ներառում է հետևյալ գործողությունների կատարումը՝*

3.1. Հեղինակային հսկողություն իրականացնող մասնագետների ներկայության ապահովումը հանձնարարվող օբյեկտների շին-վերանորոգման աշխատանքների կատարման տարածքներում (այսուհետ՝ շինարարության տարածքներ)՝ պատվիրատուի հետ համաձայնեցված պարբերականությամբ,

3.2. Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի ներկայացուցիչների պահանջով շինարարության տարածքներ արտահերթ այցելությունների կազմակերպումը՝ շին-վերանորոգման աշխատանքների կատարման որակի ստուգման նպատակով,

3.3. Նախագծանախահաշվային փաստաթղթերում շին-վերանորոգման աշխատանքների ընթացքում ի հայտ եկած բացթողումների, սխալների կամ շեղումների հնարավորինս սեղմ ժամկետներում ուղղումը՝ պատվիրատուի և շին-վերանորոգման աշխատանքներն իրականացնող կազմակերպության (այսուհետ՝ կապալառու) հետ քննարկումների հիման վրա՝ պատվիրատուի գրավոր համաձայնությամբ,

3.4. Կապալառուի կողմից կատարվող շին-վերանորոգման աշխատանքների ընթացքին հետևումը՝ բացահայտելու համար նախագծանահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներից, այդ թվում պատվիրատուի կողմից տրամադրված նախագծային առաջադրանքով սահմանված շինարարական նյութերի, սարքավորումների և ապրանքանշանների վերաբերյալ պահանջներից շեղումներն ու սխալները,

3.6. Կապալառուի և պատվիրատուի հետ աշխատանքների ավարտի մասին ընթացիկ և/կամ վերջնական ակտերի ստորագրումը՝ հավաստելով որ տվյալ ակտով ընդունված աշխատանքները համապատասխանում են նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

3.7. Նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ կապալառուի և պատվիրատուի ներկայացված դիտողությունների ու առաջարկների ուսումնասիրությունը, դրանց վերաբերյալ գրավոր եզրակացությունների տրամադրումը,

3.8. Շին-վերանորոգման աշխատանքներում էական կամ անընդունելի շեղումների (այնպիսիք, որոնք վտանգում են հանձնարարված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված կառուցվածքային ամբողջականությունը, վերանորոգվող շինության ինժեներական ու սեյսմիկ անվտանգության պահանջվող աստիճանը, ինչպես նաև կարող են առաջացնել նախատեսված ծախսերի ավելացում և շին-վերանորոգման աշխատանքների ժամկետների երկարաձգում) հայտնաբերման դեպքում կապալառուին և պատվիրատուին գրավոր տեղեկացում՝ պահանջելով շին-վերանորոգման աշխատանքների դադարեցում,

3.9. Շին-վերանորոգման աշխատանքների նախագծային արժեքներում ցանկացած ծախսային կամ ծավալային փոփոխության համաձայնեցում պատվիրատուի հետ,

3.10. Պատվիրատուի անունից հանդես գալով որպես լիազորված անձ, սույն ՏՀ-ի «աշխատանքների շրջանակը» բաժնի 1-ին կետի «1.2» ենթակետում նշված հանրային ծառայություններ տրամադրող մարմինների հետ համապատասխան ծառայությունների տրամադրման մասին բաժանորդային պայմանագրերի կնքումը, ինչպես նաև այդ ծառայությունների տրամադրման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթերի ստացումը՝ կատարելով դրանց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները:

4. Ակնկալվող արդյունքները

Սույն ՏՀ-ով սահմանված աշխատանքների արդյունքում ակնկալվում է ստանալ

1) ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղում ստեղծվելիք փոքր տան շինարարության, կահավորման և տեխնիկական զինման նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները, որոնցից յուրաքանչյուրը պետք է ներառի՝

1.1. Հանձնարարվող օբյեկտների շին-վերանորոգման համար անհարաժեշտության դեպքում հատկացված հողատարածքների և շենք-շինությունների սեյսմիկ, գեոդեզիական պայմանների, առանձնահատկությունների և վիճակի վերաբերյալ եզրակացությունները,

1.2. Հանրային ծառայություններ տրամադրող համապատասխան կառույցներից հանձնարարված օբյեկտների գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, աղբահանության ծառայությունների տրամադրման և հակահրդեհային անվտանգության համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների նկարագրերը, այդ թվում վերջիններիս ստացման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումների մասին վկայող փաստաթղթերը,

1.3. Հանձնարարված օբյեկտներում նախագծանախահաշվային աշխատանքներ սկսելու համար սահամանված տարածքների տեղական ինքնակառավարման մարմիններից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքները,

1.4. Հանձնարարված օբյեկտների գործառութային վերանորոգման համար արված ինժեներաճարտարապետական նախագծերը,

1.5. Այդ նախագծերի համար անհրաժեշտ շին-վերանորոգման աշխատանքների նախահաշիվները և ծավալաթերթերը, նախատեսված ապրանքների հիմնական որակական հատկանիշները, համարժեք ապրանքանիշները, դրանց ծագման երկիրը, իսկ սարքերի և սարքավորումների պարագայում՝ նաև համարժեք ապրանքանիշի մոդելները՝

1.6. Նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ անկախ կազմակերպության փորձաքննության եզրակացությունը,

1.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների հետ նախագծանախահաշվային փաստաթղերի համաձայնեցման մասին վկայող փաստաթղթերը, այդ թվում շին-վերանորոգման աշխատանքների և շինարարական աղբահանության թույլտվությունները և շինարարության վարման մատյանները:

1.8. իրականացնել նախագծային աշխատանքները՝ համաձայն նախարարության կողմից հաստատված նախագծման տեխնիկական առաջադրանքների, ՀՀ-ում գործող շինարարական նորմերի և կանոնների և Պատվիրատուի պահանջների, այդ թվում՝ հաշվի առնել, որ առանձնատները նախատեսված են ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց բնակության համար, ուստի առաջնորդվել ստորև թվարկվող պարտադիր իրավական ակտերով սահմանված նորմատիվներով և պահանջներով:

- ՀՀՇՆ IV -11.07.01-2006 Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար,
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար
- ՎՍՆ 62-91 Հաշմանդամների ու ազգաբնակչության սակավաշարժուն խմբերի պահանջմունքներին համաձայն կենսագործունեության միջավայրի նախագծում,
- ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն,
- ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր,
- ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում,
- ՀՀՇՆ 22-03-2017 Արհեստական և բնական լուսավորում,
- ՀՀՇՆ IV-12-02.01-04 Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում,
- ՀՀՇՆ IV-12.03.01-2004 Գազաբաշխիչ համակարգեր,
- ՍՆիՊ 2.04.01-85 Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի,
- ՎՍՆ 59-88 Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր,
- IV-11.03.03-2002 Ավտոկայանատեղեր,
- ՍՆիՊ 2.09.04-87 Ադմինիստրատիվ և կենցաղային շենքեր,
- ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր,
- ՀՀՇՆ II-7.01-2011 Շինարարական կլիմայաբանություն

✓ Ապահովել նախագծերի ձևավորման բարձր որակ,

✓ նախագծերում ներառել քաղաքաշինական փաստաթղթերի բոլոր ինժեներական բաժինները՝ յուրաքանչյուր բաժին ՀՀ-ում գործող քաղաքաշինական օրենքներով նախատեսված կազմով:

2) Հատկացված օբյեկտներում իրականացվող շինարարության, կահավորման և տեխնիկական զինման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և հեղինակային հսկողության իրականացման

աշխատանքների մասին պատվիրատուի հետ համաձայնեցված պարբերականությամբ հաշվետվությունները, որոնք պետք է ներառեն տվյալ հաշվետու ժամանակահատվածում՝

2.1 Կապալառուի կողմից իրականացված շին-վերանորոգման աշխատանքների համառոտ նկարագրությունը՝ համալրված շին-վերանորոգման ենթակա տարածքի նախնական և շին-վերանորոգման աշխատանքների արդյունքում առաջացած վիճակները պատկերող լուսանկարներով,

2.2 *Տեղեկություններ՝*

- Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակահատվածում շինարարության տարածքներ հեղինակային հսկողություն իրականացնող մասնագետների հերթական, ինչպես նաև արտահերթ այցելությունների և դրանց արդյունքների մասին,
- Նախագծի՝ շին-վերանորոգման աշխատանքների ընթացքում ի հայտ եկած բացթողումների, սխալների կամ շեղումների և դրանց վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին,
- Շին-վերանորոգման աշխատանքների ընթացքում նախագծանահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներից կապալառուի կողմից թույլ տրված շեղումների ու սխալների, դրանց վերաբերյալ խորհրդատուի ձեռնարկած քայլերի, ինչպես նաև այդ շեղումների,
- աշխատանքների ավարտի մասին կապալառուի և պատվիրատուի հետ ստորագրված ընթացիկ կամ վերջնական ակտերի մասին՝ կցելով այդ ակտերի պատճենները,
- Շին-վերանորոգման աշխատանքների նախագծային արժեքներում ի հայտ եկած ծախսային կամ ծավալային փոփոխությունների անհրաժեշտության դեպքերի և պատվիրատուի հետ դրանց քննարկումների արդյունքների մասին,

2.3 Սույն ՏՀ-ի «Աշխատանքների շրջանակը» բաժնի 1-ին կետի «1.2» ենթակետում նշված հանրային ծառայություններ տրամադրող մարմինների հետ հանրային ծառայությունների տրամադրման մասին կնքված բաժանորդային պայմանագրերը, այդ ծառայությունների տրամադրման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթերը, այդ թվում վերջիններիս ստացման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումների մասին վկայող փաստաթղթերը:

4. Արդյունքներ և կատարման ժամկետներ

Սույն ՏՀ-ով սահմանված աշխատանքները խորհրդատուն իրականացնելու երեք փուլով:

Աշխատանքային նախագիծ – Փուլ I

Փուլ I-ի ավարտին խորհրդատու կազմակերպությունը ուղեկցող նամակով պատվիրատուին է ներկայացվում էսքիզային նախագծի նախնական տարբերակը՝ կազմված գրքի/գրքերի տեսքով՝ հայերեն լեզվով, 2 օրինակից, որտեղ ներկայացված են

- ✓ *հիմնական լուծումների և առաջարկների էսքիզները՝ նվազագույնը երկու տարբերակով,*
- ✓ *նախատեսվող միջոցառումների խոշորացված գնահատումը ըստ բաժինների և ամբողջական՝ երկու տարբերակների համար (առանց գնման ենթակա կամ ներկառուցվող կահույքի ինչպես նաև կենցաղային տեխնիկայի արժեքի),*
- ✓ *գնման ենթակա կահույքի խոշորացված գնահատում,*
- ✓ *ներկառուցվող կահույքի խոշորացված գնահատում*
- ✓ *կենցաղային տեխնիկայի (սառնարան, հեռուստացույց, լվացքի մեքենա, սպասք լվացող մեքենա) խոշորացված գնահատում:*

Էսքիզային նախագծի նախնական տարբերակի ներկայացումից հետո Պատվիրատուն 7 օրացույցային օրվա (յոթ օր) ընթացքում Խորհրդատուին գրավոր ներկայացնում է իր դիտողություններն ու առաջարկները:

Խորհրդատուն 7 օրացույցային օրվա ընթացքում լրամշակում է էսքիզային նախագիծը համաձայն Պատվիրատուի պահանջների և ուղեկցող նամակով էսքիզային նախագծի լրամշակված տարբերակը 1 օրինակ ներկայացնում է Պատվիրատուին:

Աշխատանքային նախագիծ – Փուլ II

Պատվիրատուի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո Խորհրդատուն ձեռնամուխ է լինում Փուլ II-ի իրականացմանը:

Փուլ II–ի ավարտին Խորհրդատուն պատվիրատուին է ներկայացնում աշխատանքային նախագիծը՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերի և կանոնների, պահպանելով նաև գծագրերի կատարմանը ներկայացված պահանջները (մասշտաբներ, շին-մոնտաժային աշխատանքների համար անհրաժեշտ հանգույցներ և այլն):

Նույն ընթացակարգով Պատվիրատուին է ներկայացվում աշխատանքային նախագծի դեռևս փորձաքննություն չանցած նախնական տարբերակը:

Պատվիրատուն 7 օրացույցային օրվա (յոթ օր) ընթացքում Խորհրդատուին գրավոր ներկայացնում է իր դիտողությունները և առաջարկները:

Խորհրդատուն 10 օրացույցային (տասը) օրվա ընթացքում լրամշակում է աշխատանքային նախագիծը համաձայն Պատվիրատուի պահանջների, և նախագիծը հանձնում է փորձաքննության:

Փորձաքննության դրական եզրակացությունը ունենալուց հետո Խորհրդատուն ուղեկցող նամակով աշխատանքային նախագծի վերջնական տարբերակը պետք է ներկայացնի Պատվիրատուին՝ 5 օրինակով, ձևակերպված համաձայն գործող նորմերի՝ հայերեն (4 օրինակ) և անգլերեն (1 օրինակ) լեզուներով, տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

Վերջնական հաշվետվություն- Փուլ III

Խորհդատուն պատվիրատուին ներկայացնում է ամսական առաջընթացի և վերջնական հաշվետվություններ՝ դրանց կցելով մինչև շինարարական աշխատանքների սկսելը փաստող և շինարարությունների ընթացքին վերաբերող համապատասխան լուսանկարներ:

Առաջընթացի հաշվետվությունում տրվում են ընդհանուր տեղեկություններ՝ շինարարական աշխատանքների ընթացքի և կատարված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի հետ համապատասխանության մասին, ինչպես նաև, բացահայտվում են առկա խնդիրները և ներկայացվում են առաջարկներ դրանց վերացման, համադրումների կատարման վերաբերյալ:

Վերջնական հաշվետվությունը ներկայացվում է օբյեկտի շահագործման հանձնման ակտի ստորագրումից առաջ, որտեղ նշվում է շինարարական աշխատանքների ընթացքում կազմված բոլոր ակտերի և այլ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև տեղեկատվություն նախագծում կատարված փոփոխությունների, համադրումների և դրանց պատճառների վերաբերյալ, ինչպես նաև տրվում է կատարված աշխատանքների և կապալառու կազմակերպության ընդհանուր գնահատականը: Հաշվետվությանը պարտադիր կերպով պետք է կցել վերակառուցված կամ վերանորոգված տարածքի նախնական և վերջնական լուսանկարները:

5. Պահանջվող փորձն ու որակավորումները

1) Խորհրդատուն կամ նրա մասնագիտական աշխատանք կատարող աշխատակազմի անդամները պետք է ունենան՝

1.1. հասարակական շենքերի նախագծման և շինարարության հեղինակային հսկողության առնվազն հինգ տարվա փորձ,

1.2. նախագծման և հեղինակային հսկողության իրականացման համար անհրաժեշտ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր արտոնագրերը (լիցենզիաները),

1.3. վերջին հինգ տարում նմանատիպ առաջադրանքների իրականացման առնվազն երկու հաջողված նախագիծ:

2) Խորհրդատուի աշխատակազմում պետք է առնվազն ընդգրկված լինեն թիմի ղեկավար և նման կառույցների նախագծման համար անհրաժեշտ հիմնական բնագավառների մեկական մասնագետ (այդ թվում ճարտարապետ, ինժեներ-կոնստրուկտոր, ինտերիեր-դիզայնի (այդ թվում նաև՝ կահույքի) և ջերմամատակարարման և օդափոխության, ջրամատակարարման և կոյուղու, էներգետիկայի, հեռահաղորդակցության և անվտանգության ցանցերի, ճանապարհաշինարության մասնագետներ, նախահաշվորդ):

6. Կազմակերպական հարցեր

Սույն տեխնիկական հանձնարարականով նախատեսված աշխատանքների իրականացման ժամկետները կորոշվի Պատվիրատուի և Խորհրդատուի փոխհամաձայնությամբ, ելնելով կոնկրետ ծրագրերի բարդությունից և աշխատանքների ծավալից: Նախագծի մշակման ընթացքում բոլոր լուծումները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

Սույն տեխնիկական հանձնարարականի 4-րդ կետում նշված ժամանակացույցում, նախագծի նախահաշիվներում կամ նախապես համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը:

Բոլոր աշխատանքները և արդյունքները կվերահսկվեն Պատվիրատուի կողմից:

Պատվիրատուի կողմից Խորհրդատվական կազմակերպությանը յուրաքանչյուր օբյեկտի պատվեր կներկայացվի համապատասխան գրությամբ:

Խորհրդատվական կազմակերպությունը կֆինանսավորվի երեք փուլով՝

1) յուրաքանչյուր օբյեկտի պատվերի նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնելու, շինարարական թույլտվությունը ապահովելու դիմաց,

2) օբյեկտների գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հակահրդեհային, ըստ անհրաժեշտության նաև հեռախոսակապի և սանիտարահիգիենիկ թույլտվությունների ստացման և պայմանագրերի կնքման աշխատանքներն իրականացնելու դիմաց,

3) հեղինակային հսկողության իրականացնելու դիմաց:

7. Տևողությունը և վճարման պայմանները

1) Սույն ՏՀ-ի «կազմակերպական աշխատանքներ» բաժնում նշված առաջին և երկրորդ փուլերի համար սահմանված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքները հանձնարարված յուրաքանչյուր օբյեկտի հաշվով իրականացվելու է պատվիրատուի կողմից աշխատանքների մեկնարման մասին համապատասխան գրությունը ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում՝ բայց երկուսը միասին ոչ ավել, քան պայմանագրի ստորագրման պահից սկսած վեց ամսվա ընթացքում:

2) Սույն ՏՀ-ի «կազմակերպական աշխատանքներ» բաժնում նշված երկրորդ փուլի համար սահմանված հեղինակային հսկողության աշխատանքներն իրականացվելու են հանձնարարված օբյեկտների շին-վերանորոգման աշխատանքների մեկնարկման պահից սկսած մինչև կապալի պայմանագրով նախատեսված շին-վերանորոգման աշխատանքների ավարտման և հանձնարարված օբյեկտի շահագործման հանձնման ակտի ստորագրումը:

3) Սույն ՏՀ-ով սահմանված աշխատանքների կատարման համար պատվիրատուն վճարումը կիրականացնի երեք փուլով, հիմք ընդունելով սույն ՏՀ-ի «կազմակերպական հարցեր» բաժնում նշված առաջին, երկրորդ և երրորդ փուլերի աշխատանքների վերաբերյալ վերջնական հաշվետվությունները:

Խորհրդատուն աշխատանքները պետք է իրականացնի պայմանագրով սահմանված մեկնարկի օրվանից մինչև վերջին ծրագրի օբյեկտի շահագործման հանձնման ակտի ստորագրումը:

Խորհրդատվական կազմակերպության ծանրաբեռնվածությունը չի կարող աշխատանքների երկարաձգման պատճառ հանդիսանալ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզի սույն տեխնիկական հանձնարարականիանբաժանելի մաս կազմող հավելված 1-ի պահանջներին համապատասխան:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011033793 գլխավոր քարտուղար՝ Ս. Մուշեղյան (ստորագրություն) Կ.Տ.	«ՃԱՐՏՇԻՆ նախագիծ և դիզայն» ՍՊԸ ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն ՀՎՀՀ՝ 01273917 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ՝ 220573330143000 Տնօրեն՝ Հ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 27 » « հոկտեմբերի » 2020 թ. *կնքված*
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանք															
Հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	71241200/2	ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ												2 363 000	2 363 000
	Ընդամենը													2 363 000	2 363 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011033793
գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ճարտշին նախագիծ և դիզայն» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան,Արզումանյան 8ա, 27 բն
ՀՎՀՀ՝ 01273917
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220573330143000
Տնօրեն՝
Հ. Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԱՇՁԲ-20/29-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն